

Գ. ՄԿՐՏԶՅԱՆ, «ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

«Գրադարանային գործը Հայաստանում իրավամբ մի հետաքրքիր թեմա է, տակավին չուսումնասիրված, բայց խիստ կարևոր մի բնագավառ: Այդ տեսակետից ուշագրավ է Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրապետական գրադարանի կողմից վերջերս հրատարակված Գ. Մկրտչյանի այդ թեմային նվիրված գիրքը»:

Հենց սկզբից նկատենք, որ հեղինակը իրավացիորեն գրադարանային գործը անխզելիորեն կապում է մեր ժողովրդի կուլտուր-կրթական մակարդակի, դպրոցների, գիր ու գրականության պարզացման և, որ ամենակարևորն է, տվյալ ժամանակաշրջանի ու նրա խնդիրների հետ:

Պատմական համառոտ ակնարկից հետո գրքի առաջին գլխում ամփոփ կերպով տրված է գրադարանային գործի իրական վիճակը Հայաստանում մինչև սովետական կարգերի հաստատումը: Այդ ժամանակ Հայաստանում գործում էին 166 դպրոց հազիվ 20 հազար աշակերտով: Անդամները 7 միջնակարգ և ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն: Բնակչության 90 տոկոսը անգրագետ էր: Երկրում գործում էին 13 մասսայական գրադարան 9 հազար գրքային ֆոնդով... Համեմատության համար նշենք, որ այդ տիպի գրադարանների թիվը 1962 թ. անցնում էր 2650-ից և գրականության ընդհանուր քանակը հասնում էր ավելի քան 20 միլիոնի:

Թեև Հայաստանում մինչև հեղափոխությունը չի եղել գրադարանային պետական ցանց, սակայն հեղինակը արխիվային փաստաթղթերով ցույց է տալիս, որ այնուամենայնիվ, տասնամյակներ առաջ, երկրում գործող ոչ մեծաթիվ, բայց և այնպես քիչ թե շատ իրենց խաղացած դերով աչքի էին ընկնում դեռևս 1832 թ. Երևանում բացված արական դասական գիմնազիայի, 1850 թ. Ս. Հովհաննիսյանի իգական, հետագայում՝ արական և օրիորդաց գիմնազիաների, ուսուցչական սեմինարիայի, թեմական հոգևոր դպրոցի, հայոց բարեգործական ընկերության և մի քանի հասարակական ու մասնավոր այլ գրադարան-ընթերցարաններ: Բնակչության շնչին մասն էլ, սակայն, օգտվում այդ գրադարաններից, ընթերցողների մեծամասնությունը սովորողներ էին:

Հեղափոխության վերելքի տարիներին, ինչպես նշում է հեղինակը, մարքսիստական գրականությունը մասսաներին հասցնելու գործում օգտագործվում էին անլեզու միջոցներ, ինչպես նաև հասարակական գրադարանները: Այնուամենայնիվ, շատ գրադարաններ փակվում էին ուսուցչականության կողմից, հատկապես 1914 թ. սկսած:

Գրքի հաջորդ գլխում, հեղինակը ջանադիր ու մանրակրկիտ ուսումնասիրությամբ ցույց է տալիս, թե ինչպես է պետական նշանակություն ստանում և իր զարգացումն ապրում գրադարանային գործը Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին:

Դրանք կուլտուրական շինարարության, ժողովրդական լուսավորության, անգրագիտության վերացման տարիներն էին: Տարիներ, երբ գրադարանային աշխատանքը ընթանում էր Հենինի անմիջական ղեկավարությամբ:

«...Մենք պետք է ձեռնամուխ լինենք գրագետների մոբիլիզացիայի և անգրագիտության պիմ մղվող պայքարի հասարակ կենսական գործին: Մենք պետք է օգտագործենք այն գրքերը, որ մեզ մոտ կան և ձեռնարկենք գրադարանների պլանաչափ կազմակերպված ցանցի ստեղծմանը, որոնք ժողովրդին կօգնեն օգտագործել մեզ մոտ եղած ամեն մի գրքույկ, զուգահեռ կազմակերպություններ շտեղծենք, այլ միասնական պլանաչափ կազմակերպություն ստեղծենք: Այս փոքրիկ գործում արտացոլվում է մեր ուսուցիչային հիմնական խնդիրները: Վ. Ի. Հենինի այս դրույթը և ժողկոմսովետի ընդունած դեկրետները գրադարանային գործի ու ժողովրդական լուսավորության վերաբերյալ, գործողության ծրագիր և ուղենիշ էին Հայաստանի կոմունիստական կուսակցության ու կառավարության համար: Գրքի այս գլխում հեղինակը հրապարակված և

չհրապարակված արխիվային նյութերի հիման վրա, բավական հանգամանալից նկարագրում է այն հերոսական տարիների իրական պատկերը, երբ Հայաստանը քայլ առ քայլ վերականգնում էր իր տնտեսությունը, ստեղծում գրադարանների ու դպրոցների խիտ ցանց, հետամնացությունից վերածվում համատարած գրագիտության երկրի, հիմնում հրատարակչություններ, համալսարան, թատրոն, թանգարան և կուլտուրայի այլ օջախներ: Այդ տարիներին, ինչպես ցույց են տալիս բերված փաստերը, նշանակալից դեր են խաղացել քաղաքացիները, գյուղերում լուսավորություն տարածող խրճիթ-ընթերցարանները: Մանրամասն ուսումնասիրելով դրանց աշխատանքը, հեղինակը շի մնում գերի փաստերին, այլ դրանք խորը վերլուծելով ու ընդհանրացնելով, կարևոր եզրահանգումներ է անում պատմականորեն անցման շրջանում մեր երկրի կյանքում գրադարանների ունեցած դերի ու նրանց կատարած աշխատանքի վերաբերյալ:

Գրադարանային գործի զարգացման հաջորդ փուլին՝ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման և սոցիալիզմի հաղթանակի ժամանակաշրջանին է վերաբերում գրքի երկրորդ գլուխը: Կուլտուրական հեղափոխության ժամանակաշրջանն էր թևակոխում երկիրը: Մասսաների կուլտուրական վերելքի արագ տեմպով էր պայմանավորված սոցիալիստական շինարարության հետագա հաջողությունը: Մեծ, տիտանական աշխատանք էր պահանջվում այդ վերելքը ստեղծելու համար, քանի որ «Կուլտուրական խնդիրը,— նշում էր Վ. Ի. Լենինը քաղաքացիների Համամիութենական 2-րդ համագումարում,— շի կարող այնպես արագ լուծվել, ինչպես քաղաքական ու ռազմական խնդիրները...»: Եվ դա հիմնականում տևեց շուրջ մեկուկես տասնամյակ՝ 1926—1940 թվականները: Այս տարիներին Հայաստանում ավելի է ընդարձակվում գրադարանային ցանցը, ավելանում խրճիթ-ընթերցարանների, մանկական ու արհմիութենական գրադարանների թիվը: Բուռն կերպով աճում է հանրապետական գրադարանը, բազմանում են գիտական և այլ տիպի գրադարանները, ընդլայնվում է Պետհրատի գործունեությունը, տպագրվում են համեմատաբար ավելի շատ դասագրքեր: Եվ շնայած դրան, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրության հեղինակը, այդ ժամանակաշրջանում ոչ բոլոր գրադարաններն ու խրճիթ-ընթերցարաններն էին կանգնած իրենց կոչման բարձրության վրա: Չնայած ընդհանուր հաջողություններին, «քաղաքացիական ցանցը գյուղում հնարավորություն չունեցավ սպասարկելու աշխատավորների աճող պահանջները: Լիկկայանը գործում էր անկախ, դպրոցը կապված չէր խրճիթ-ընթերցարանների հետ, որոշ տեղերում բժիշկը առանձին էր ագիտացիա անում, ագրոնոմը՝ առանձին... իրճիթվարը, որ միաժամանակ գրադարանավարն էր, չէր կարողանում ղեկավարել ընթերցարանի աշխատանքը, անհրաժեշտ դիրքը հանձնարարել ընթերցողին» (էջ 47):

Ինչո՞ւ էր ստեղծվել այսպիսի իրավիճակ: Հեղինակը խորանալով փաստերի մեջ, հանգում է ճիշտ եզրակացության՝ կյանքը առաջ էր անցնում, կադրերի զգալի մասը ետ էր մնացել իր պատրաստականությանը: Բայց դա միակ պատճառը չէր: Աշխատանքի կազմակերպման դրվածքը այլևս չէր համապատասխանում սոցիալական խորը վերափոխումների հետևանքով կյանքի առաջադրած պահանջներին: Այս գլխում մանրամասն ցույց են տրված այն կարևոր վերափոխումները և դրական աշխատանքը, որ տեղի ունեցավ գրադարանների աճի ու նրանց գործունեության մեջ կուսակցության ու կառավարության ամենօրյա հոգատարության և ուշադրության հետևանքով: Արհմիությունները, ինչպես նաև կոմերիտմիությունն ու ընթերցող ակտիվը սկսում են վճռական դեր խաղալ գրադարանների աշխատանքում: Այս գլխում լայն ընդգրկումով տրված է ինչպես պետական հանրային գրադարանի, այնպես էլ բուհական ու արհմիութենական, գործարանային գրադարանների աշխատանքը աշխատավորության լայն շրջաններում՝ Երևանում, Լենինականում, Ալավերդում, Ղափանում, Արարատում և այլ վայրերում:

Գրքի հաջորդ երկու գլուխները նվիրված են գրադարանների գործունեությանը՝ Հայրենական մեծ պատերազմի և ետպատերազմյան շրջանում:

Հարուստ, կյանքից վերցրած բազմաթիվ օրինակներով, հեղինակը ցույց է տալիս հիրավի այն հայրենանվեր աշխատանքը, որ մեր գրադարանները կատարում էին պատերազմի ծանր տարիներին, աշխատավորությանը հասցնելով ճշմարիտ խոսքը ու հաղթանակի հավատը: Նրանք իրենց համեստ ավանդն են ներդնում «Ամեն ինչ ռազմաճակատի համար» նշանաբանով աշխատող մարդկանց հավատը, եռանդն ու ստեղծագործ ոգին վառ պահելու համար: Գրադարանները օգնում են պետական, կուսակցական օրգաններին իրագործելու պարտուսը, ռազմական ու ֆիզկուլտ խմբակների ստեղծմանը, տեղական պաշտպանության կոմիտեներին, կազմակերպում են ցուցահանդեսներ, երեկոներ, հրատարակում ագիտ թերթիկներ, ուր լուսարանվում է մեր խիզախ մարտիկների սիրագործությունը, փառաբանվում է հերոսությունը և բորբոքվում ատելությունը զավթիչների նկատմամբ:

Ստպատերազմյան տարիներին գրադարանների աշխատանքը նոր նշանակություն և մեծ թափ է ստանում: Հեղինակը մանրամասնորեն վերլուծում է այն կարևոր գործունեները, որոնց հիման վրա ծավալվում է գրադարանային աշխատանքը: Այդ շրջանում, ինչպես և այժմ, գրադարանների հիմնական խնդիրն է մնում աշխատավորության լայն մասսաներին հասցնել կուսակցության ու կառավարության որոշումները, լայն բացատրական աշխատանք տանել տեղերում: Կիրքը հասցնել յուրաքանչյուր ընտանիքի և ընթերցողի: Ամեն կերպ նպաստել աշխատավորության մտավոր զարգացմանը, նրանց կուլտուր-կրթական մակարդակի բարձրացմանը, մասնագիտության խորացմանը, բարոյական դաստիարակությանը:

Այս տեսակետից էլ բարձրացվում են հարցերը գրքի եզրափակիչ գլխում, որը քննության է առնում Հայկական ՍՍՌ-ում գրադարանային գործի զարգացման հանրագումարը և հեռանկարները:

Աշխատության գրեթե բոլոր գլուխներում, նյութի հետ շաղկապված, քննության է առնվում հանրապետական (հանրային) գրադարանի գործունեությունը՝ որպես մեր հանրապետության բոլոր գրադարանների աշխատանքի կոորդինացման և մեթոդական կենտրոնի, որը ինքնին ուսումնասիրության է մի առանձին թեմա է:

«Գրադարանային գործը Հայաստանում» գիրքը փաստերի լոկ պարզ շարադրանք չէ: Հեղինակը ուսումնասիրելով մեր հանրապետության մասսայական, գիտական, արհմիութենական և այլ գրադարանների երկար տարիների գործունեությունը, վերլուծել, մեկնաբանել, ընդհանրացրել և բարձրացրել է «բուն» գործի հետ առնչվող գրադարանագիտական այժմ էական ու պրոբլեմատիկ կենսական շատ հարցեր: Այդ խնդիրներից են՝ գրականության կոմպլեկտավորումը, գրքային ֆոնդը, ընթերցողների կազմը, նրանց հետ տարվող անհատական և մասսայական աշխատանքի ձևերն ու մեթոդները կապված կյանքի առաջադրած խնդիրների հետ և այլն:

Բարձրացված այդ հարցերից յուրաքանչյուրը թերևս գիտական կարևոր նշանակություն ունի ամեն մի գրադարանի համար ոչ միայն նրա կատարած աշխատանքը արժեքավորելու, այլև նրա այսօրվա և առաջիկա տարիների աշխատանքը պլանավորելու, հետագա գործունեությունը ճիշտ հունի մեջ դնելու տեսակետից:

Լավ գիրք է, օգտակար և շահեկան ոչ միայն գրադարանների համար: Եվ այս բնագավառում առաջինը լինելով, գերծ չէ նաև թերություններից, որոնք բնավ չեն փոքրացնում գրքի արժեքն ու կարևորությունը: Նկատվում է փաստերի, թվական տվյալների, գրքերի և անունների անհարկի հիշատակություն, որոնք իրենց տեղը հեշտությամբ կարող էին գիջել այն էջերին, ուր հեղինակը փորձում է հմտորեն թափանցել գրադարանների գործունեության ոլորտները: Դրանից կարող էին շահել ոչ միայն գիրքը, այլև ընթերցողները:

Ա. ԾԱՀԱՂԻՉՅԱՆ